Քաղվածք N- 2/2-1

2019 թուականի Յունուար 18-էն 20-ը Ժնեւի եւ Երեւանի մէջ զուգահեռ կը կայանայ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի (Խորհրդարանի) երկրորդ գումարման երկրորդ նստաշրջանի Շարունակություն

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Երկրորդ գումարման երկրորդ նստաշրջանի արձանագրությունից

20-ը հունվար, 2019 թ.,
Նիստի սկիզբը ժամը 15:00-ին, ավարտը՝ 20:00-ին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Պատգամավորները Խորհրդարանի Նախագահ Աղուան ՏՕՆԱԿԱՆԵԱՆի գլխավորութեամբ եւ նօր Կառավարութեան Վարչապետ Գառնիկ ՍԱՐԳՍԵԱՆի եւ Կառավարութեան ներկայացուցիչների հետ միասին այցելեցին ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ, իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արեւմտեան Հայաստանում տարացքում իրարահաջորդ թուրքական երեք Կառավարությունի կողմից երկու միլիոն Հայերի դեմ կատարված Ցեղասպանութեան զոհերի հիշատակին:
Բոլորը միասին ծաղկեպսակ դրեցին հուշակոթողի առջեւ, ի փառս սրբություն դարցած նախնիների ոսկորների համար, իրենց աղոթքը կարդացին:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ այցելելուց հետո այցելեցին ԵՌԱԲԼՈՒՐ ՊԱՆԹԵՈՆ, որտեղ նույնպես ծաղկեպսակ դրեցին ՀԱՀԳԲ-ի – ASALA-ի զոհված ազատամարտիկների հուշարձանի մոտ, խոնարվեցին ռազմիկների շիրիմներին, հարգելով նրանց վառ հիշատակը: Որոնք իրենց կյանքը նվիրեցին հանուն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային ճանաչմանը: ԵՒ պայքարի մտան հանուն հայ ազգի եւ հանուն նախնիների հիշատակին:

Շարունակական այցելություն ունեցան ՀԱՅՈՑ ԶՈՐԱՎԱՐ Անդրանիկ ՕԶԱՆԵԱՆի շիրիմին, նույնպես ծաղկեպսակ դրեցին շիրիմի մոտ եւ հարգանքի տուրք մատուցեցին նրա վառ հիշատակին:
Քանզի Անդրանիկ ՕԶԱՆԵԱՆը, Հայոց մեծ զորավարը իր կյանքը ապրեց նվիրելով հանուն Արեւմտեան Հայաստանի ազատագրմանը:

Անդրանիկ ՕԶԱՆԵԱՆԻ եւ ՀԱՀԳԲ-ի շիրիմների մոտ իրենց սրտի խոսքն արտահայտվեցին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ Աղուան ՏՕՆԱԿԱՆԵԱՆը եւ Արեւմտեան

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան նօրընտիր Վարչապետ Գառնիկ ՍԱՐԳՍԵԱՆը։

Նոյն ժամանակ, Ժնեւում, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նօրընտիր նախագահ Արմենակ Աբրահամեանի գլխավորութեամբ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Պատգամավորները այցելեցին Ժնեւվի հայկական եկեղեցի, եկեղեցու բակում գտնվող հին Ճուղա-ի ԽԱՉՔԱՐԻ առջեւ ծաղկեպսակ դրեցին ի հիշատակ 2 միլիոն սրբադասված հայերի հիշատակին։ Հարգանքի տուրքը մատուցեցին Արեւմտեան Հայաստանում տարածքում հայերի դեմ կատարված ցեղասպանութեան զոհերի հիշատակին։

Ժամը 18-ին, Արեւմտյան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Պատգամավորները հեռարձակման ուղիղ կապի միջոցով Երեւան-Ժնեւ բազում աշխատանքային քննարկումներ ունեցան հետագա աշխատանքների հետ կապված, քննարկեցին տարբեր ծրագրեր եւ վստահություն հանձնելով մեկը մյուսին ներառյալ Արեւմտյան Հայաստանի Հանրապետութեան ներկա նօրընտիր Պադգամավորները, հույսով եվ հավատով, ցանկացան միմյանց եռանդուն ու բեղմնավոր աշխատանքներ, հանուն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ազատագրման, բարգավաճման եւ բարորութեան։

Միասնաբար երգեցին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ՕՐՀՆԵՐԳԸ։

Ժամը 20:00-ին նիստը ավարտվեց։

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Երկրորդ գումարման երկրորդ նստաշրջանը փակված է ։

Աղուան ՏՕՆԱԿԱՆԵԱՆ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի (Խորհրդարանի)
Նախագահ